ներս ինձ համար խիստ հետաքրքրական էին։ Այստեղ տան բակում սարքած էր իորափը, ուր մամս մի քանի հարսների հետ կտաւ էր գործում։ Թոնդրափի մօտ յատուկ տեղում դրւած էր մեծ պղինձը, ութսուն դոյլանոց, որի մէջ այդ օրերը մամս սապոն (օճառ) եփեց. շարունակ երեք չորս օր զօր եւ գիշեր վառում էին պղնձի տակը–կրակարանը։ Կալաքարը, կիրը, ամէն ինչ մամս պատրաստել էր նահապետական ձեւով, սապոնը պատրաստելուց յետոյ, ջարդեց եւ շարեցին տան կտուրի կաւառի տակը չորցնելու։ Էշկինարի այգին, ուր ամէն տեսակ պտուղներն հասել էին, շատ հաճելի զբօսավայր էր։ Մամս յատուկ կարասների մէջ թութը թթուեցնում, օղի էր քաշում ամէն ուրբաթ եւ շաբաթ օրերը։ Վարձխատի գոմը, Սիեօլի եւ Սալի–գլխի արտերը, Ունուսխեւի մարգը, Առաւէտի պարտէզը, Տանձոտի ծխախոտի տնկարանը, Կլարջէթի այգին, Գորդայի բաղը նորանոր եւ խիստ գրաւիչ տեսարաններ էին ինձ համար, որտեղերը շարունակ թափառում էինք ոտքով եւ հեռաւոր վայրերը ձիով։ Բարեկամազգական, միայն մեր տոհմից–Խաչատուր Կարագեօղեանի սերնդից 70 տուն էինք կազմում, ամէն մէկը հրաւէր էր սարքում, հաւաքոյթ էր անում եւ մեզ մեծրում էր։

Հօրեղբայրս ամէն առաւօտ արշալոյսին գնում էր Վարձխատի անտառը; տան